Հորիզոնական շերտերի հանումով և լցումով մշակման համակարգերի հետագա զարգացումն հիմնականում կապված է պնդացող լցանյութի ներդրման, լցման աշխատանքների մեքենայացման և ավտոմատացման, ինչպես նաև մաքրման աշխատանքներում բարձր արտադրողական ինքնագնաց մեքենաների լայնորեն օգտագործման հետ: Սկսած 20-րդ դարի 60-ական թվականներից ստեղծվեցին ու արտադրության մեջ ներդրվեցին համակարգերի առաջադիմական «մեքենայացված» տարրերակներ: Նշված ճանապարհով են ընթացել «Բոլիդեն», «Մաունթ Այզա», «Կորար», «Լակ Արևուտք», «Ֆունթանա Ռամինոսա», «Սոսաբանի Քոփեր», «Ֆանկոու» և այլ հանքեր [1,3,5]:

Կախված լեռնային ճնշման ղեկավարման պայմանից առանձնանում են հորիզոնական շերտերի հանումով և լցումով մշակման համակարգերի երկու տարբերակներ՝ հանքաքարի փուլային և համատարած հանույթով, որոնք, որպես կանոն, կիրառվում են հզոր և գերհզոր հանքամարմինների շահագործման համար: Առաջինի դեպքում հանքամարմինը ըստ տարածման խաչող ուղղությամբ բաժանվում է հանութային խցերի և միջխցային բնամասերի: Խցերում հանքաքարի հանույթն իրականացվում է հորիզոնական շերտերի հանումով և լցումով համակարգով, իսկ միջխցային բնամասերը, կախված հանքաքարում օգտակար բաղադրիչների պարունակությունից, կամ ամբողջությամբ կորզվում են մեծամասամբ վարընթաց շերտերի հանումով և պնդացող լցանյութով մշակման համակարգերով, կամ էլ մասնակի՝ խցերի մշակման ժամանակ:

Բնամասերի մասնակի կորզմամբ հորիզոնական շերտերի հանումով և լցումով մշակման համակարգերի ենթատարրերակի կիրառման լավագույն օրինակ կարող են ծառայել Կանադական «Ստրատկոնա» և «Լակ» հանքերը [1]: «Ստրատկոնա» հանքում վարընթաց շերտերի հանումով և լցումով մշակման համակարգով բնամասերի կորզումը պահանջել է դատարկ ապարներում մեծ ծավալի փորվածքների անցկացում և լեռնային աշխատանքների ապակենտրոնացում: Հետևաբար, որոշվել է համակարգը արդիականացնել այնպես, որպեսզի ապահովվի բարձր արտադրողական ինքնագնաց բարձող-առբերող և հորատող սարքավորումների առավելագույն արդյունավետություն: Արդյունքում ստեղծվել է հորիզոնական շերտերի հանումով և լցումով ու սյունաձև բնամասերի թողնմամբ մշակման համակարգի նոր տարրերակ [6]: Հանքում կատարվել է հորիզոնական շերտերի հանումով և լցումով տարրերակի համեմատում: Պարզվել է, որ առաջին տարրերակի դեպքում 1տ հանքաքարի արդյունահանման ինքնարժեքը կազմում է 8,3\$, աղքատացումը՝ 5% և կորուստները՝ 14%, իսկ երկրորդ տարրերակի դեպքում, համապատասխանաբար, 12,5\$, 7% և 0%: Երկու տարրերակների տնտեսական համեմատումը ցույց է տվել, որ հանքաքարի կորուստներից ստացվող վնասը փոխհատուցվում է աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին հավելածային շահույթով: Սյունաձև բնամասերի թողնմամբ տարրերակի կիրառումը առավել ձեռնտու է հանքավայրերի համեմատաբար աղքատ տեղամասերի մշակման համար: Այդ եզրակացությանն են հանգել «Ստրատկոնա» հանքի մասնագետները:

Հորիզոնական շերտերի մեկ փուլանի համատարած հանույթով և լցումով մշակման համակարգերի տիպիկ օրինակ է Նորիլսկի կոմբինատի հանքերում կիրառվող տարրերակը [7, 8]: Այդ տարրերակի կիրառման նպատակահարմարությունը պայմանավորված է մեծ խորության (0,5-1,0կմ) վրա տեղադրված լայնար-

ծակ, 20մ հզորությամբ հորիզոնական հանքակուտակի մշակման ժամանակ լեռնային ճնշման վնասակար ազդեցության նվազեցման անհրաժեշտությամբ:

Հանքամարմինը բաժանվում է պանելների (բուկների), որոնք իրենց հերթին՝ ժապավենների: Վերջիններս մշակվում են հաջորդաբար հորիզոնական շերտերի հանումով և լցումով համակարգով: Քանի որ բոլոր լեռնային աշխատանքները համակենտրոնացվում են հանութային ժապավենի լայնությամբ որոշվող ոչ մեծ մակերեսի վրա, ապա մաքրման հանքախորշերի առաջատարացման մեծ արագությունը ապահովվում է բարձր արտադրողական սարքավորումների համալիրների կիրառմամբ: Այստեղ թերևս հարկ է նշել մի չափազանց կարևոր կազմակերպչական միջոցառման մասին: Մինչև շերտի լցնելը կատարվում է դրա լրիվ մաքրում և լեռնային իմժեներներից, երկրաբաններից և մարկշեյթերներից բաղկացած հանձնաժողովը կազմում է արձանագրություն այն մասին, որ «շերտը պատրաստ է լցանյութի լցմանը»: Ընդ որում պոկված հանքաքարի կորուստները չափվում են ուղղակի եղանակով: Արդյունքում բոլոր տեսակի կորուստները գումարային տեսքով կազմում են մոտ 1,5%:

1-ին արդյունավետ բերված է արտասահմանյան հանքերում կիրառված հորիզոնական շերտերի հանումով և լցումով մշակման համակարգերի հիմնական պարամետրերը, իսկ 2-րդ արդյունավետ՝ տեխնիկատնտեսական բնույթի ցուցանիշները:

Այսպիսով հորիզոնական շերտերի հանումով և լցումով մշակման համակարգի համաշխարհային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդհանուր առմամբ հանքաքարի արդյունահանման դիտարկվող տեխնոլոգիան ապահովում է ի հաշիվ ինքնագնաց սարքավորումների օգտագործման հանքախորշային բանվորի աշխատանքի համեմատաբար բարձր արտադրողականություն և շնորհիվ հուսալի միջշերտային երեսարկների՝ ընդերքից օգտակար հանածոյի կորզման բարձր որակաբանական ցուցանիշներ: Միջշերտային երեսարկների կիրառումը պետք է դիտել չափազանց կարևոր միջոցառում օգտակար բաղադրիչի, համեմատաբար, բարձր պարունակությամբ ներկայացված հանքաքարերի, մասնավորապես Դոմբոնի ոսկու-պղնձի հանքավայրի մշակման դեպքում:

Արտասահմանյան հանքերում կիրառված հորիզոնական շերտերի հանումով և լցումով մշակման համակարգերի պարամետրերը Աղյուսակ 1

Հանքի անվանումը	Հանքաքարի կազմը	Հանքամարմնի հզորությունը, մ	Հանքամարմնի անկյունը աստ.	Հանութային միավորի երկարությունը, մ	Սերերող սարքավորման մակնիշը	Հորատող սարքավորման մակնիշը	Մարմնի փորվածքի մերկացման թիվը, մ
«Մայակ» հանք (ՌԴ)	պրիմ և միկել	12,0 - 18,0	6 - 12	60 - 150	«T4G»	«С5У - 2»	
«Նորիլսկի» կոմբինատի հանքեր (ՌԴ)	բազալ-մետաղ	20,0	0	120	«ST - 5A»	«Еумер-135»	8,0
«Ֆունթանա - Լամինոուսա», հանք (Իտալիա)	0,8% պրիմ 0,6% կապար 2,1% ցինկ	9,0	45 - 50	250 - 300	«Торр-135»	-	9,0
«Բոլիդեն» ընկերության հանք (Շվեդիա)	1,0% պրիմ 8,0% ցինկ 2,0% կապար	2,0 - 20,0	50 - 90	-	«T4G»	-	-
«Ֆանկոու» հանք (Հինգապան)	ցինկ և կապար	20,0 - 50,0	70 - 80	100	«T2G»	VT - 30	-
«Մաունթ Այզա» հանք (Անտարկտիկա)	5,9% ցինկ 7,8% կապար 3,5% պրիմ	3,0 - 18,0	65	245 - 610	«ST - 5A»	«Гардир - Денвер»	8,0 - 10,0
«Ստրատկոնա» հանք (Կանադա)	1,15% միկել 0,42% պրիմ	70,0	60,0	50 - 60	«ST - 2» «TS - 4»	-	9,0

Արտասահմանյան հանքերում կիրառված հորիզոնական շերտերի հանունով և պնդացող լցանյութով մշակման համակարգերի տեխնիկատնտեսական ցուցանիշներ

Հանքի անվանումը	Հանության միավորի արտադրողականությունը, հազ տ/ամիս	Հանքախորշային բանվորի աշխատանքի արտադրողականությունը, մ <sup>3</sup> /ադր-հերթ	Պ. Ն - ի ծախսը, կգ/մ <sup>3</sup>	Կորուստները, %	Աղքատացումը, %
«Մայակ» հանք (ՌԴ)	4,0	16,7	0,8 - 0,9	2,4	2,3
«Լորիսլի» կոմբինատի հանքեր (ՌԴ)	4,0 - 6,0	20,0 - 30,0	1,3	2,0	6,0 - 7,0
«Բոլիդեն» ընկերության հանք (Շվեդիա)	---	8,0 - 16,0	---	5,0 - 15,0	5,0 - 15,0
«Ֆանկու» հանք (Չինաստան)	3,0 - 4,0	5,0	---	1,0	9,7
«Սաունը-Սլզա» հանք (Ավստրալիա)	12,0	13,6	0,9 - 1,1	---	10,0
«Ստրատկոնա» հանք (Կանադա)	15,0	---	0,6	0 <sup>1</sup>	7,0

\* բերված ցուցանիշը վերաբերվում է հանության խցերին

Գրականություն

1. Хомяков В.И. Зарубежный опыт закладки на рудниках. -М.: Недра, 1984.
2. Gordon M. Miner. Use of cement in hydraulic fill // Mining Congres journal, 1966, N 11.
3. Броников Д. М., Замесов Н. Ф., Курченко Г.С. и др. Основы технологии подземной разработки рудных месторождений с закладкой.-М.: Недра, 1973.
4. Cummins A.B., Given I.A. SME Mining Engineering Handbook. - New York, 1973. - V. I.
5. Насевски Д. Разработка свинцово-цинковых месторождений в республике Македония // Горный журнал, 1999, N 7.
6. Cleland Roy S., Singh K.N. Development of "post" pillar mining at Falconbridge Nickel Mines Limited-CIM Bulletin, 1973. N 4.
7. Именитов В.П. Процессы подземных горных работ при разработке рудных месторождений.-М.: Недра, 1978.
8. Руднику "Таймырский"-20 лет // Горный журнал, 2002, N 11-12.

**ՀՈՐԱՏԱՊԱՅԹԵՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ  
ՀԻՂՐՈՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԹՈՒՆԵՆԵՐԻ ՇԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**  
Ն. Գրիգորյան, Լ. Գրիգորյան

Հիդրոտեխնիկական թունելների անցկացման ժամանակ հորատապայթեցման գործընթացով որոշվում է ապարների բարձրման եվ ամրակապման աշխատանքների ռացիոնալ կազմակերպումը: Հետևապես հորատապայթեցման աշխատանքներից պահանջվում է.

- ապարների փուլգում փորվածքի նախագծային կտրվածքի ծավալով եւ պայթանցքերի ամբողջ խորությամբ,
- որոշակի ֆրակցիայով ապարների հավասարաչափ ջարդում, որն ապահովվում է բարձրման սարքավորումների առավելագույն արտադրողականություն,
- պայթեցված ապարների միմիմալ ցրում, որը կապահովի ապարների հավաքման ժամանակ աշխատատարության նվազում,

• աշխատանքների առավելագույն մեքենայացում:  
Հորատապայթեցման աշխատանքների արդյունավետությունն որոշվում է նրանով, թե կախված լեռներկրաբանական պայմաններից, ապարների ֆիզիկո-մեխանիկական հատկություններից, ապարների ամրությունից, ճեղքավորվածությունից, շերտավորվածությունից, ինչպես նաեւ ՊՆ-ի տեսակից եւ ծախսից, պայթանցքերի խորությունից, լիցքի կառուցվածքից, պայթանցքերի դասավորության սխեմայից, լիցքերի պայթեցման հերթականությունից, հորատման սարքավորման տեսակից եւ աշխատանքների կազմակերպումից, որքանով են ճիշտ ընտրված եւ որոշված նրա պարամետրերը:

- Հորատապայթեցման աշխատանքների պարամետրերը որոշված են
1. 18,5մ<sup>2</sup> եւ 9,5մ<sup>2</sup> կտրվածքով հիդրոտեխնիկական թունելների անցկացման ժամանակ,
  2. ապարների ամրության գերծակիցն, ըստ պրոֆ. Ս. Ս. Պրոտոդյակոնովի, կազմում է՝ f=12-14,
  3. պայթանցքերի հորատումն իրականացվում է ПП-30 ձեռքի պերֆորատորով,
  4. որպես ՊՆ կիրառվում է ամոնիտ N6ЖВ, որի փամփուշտի տրամագիծն է d= 32մմ,
  5. ապարների բարձումն իրականացվում է ПНБ-4 ապարաբարձիչ մեքենայով,
  6. ժամանակավոր ամրակապը անկերային մետաղական ցանցով եւ բրիզգրետոնե ամրակապերն են:

Հանքախորշում ապարների քայքայման համար ՊՆ-ի ընդհանուր ծախսը որոշվում է փորվածքի լայնական կտրվածքի մակերեսով ( $S_{անց}$ ) եւ պայթանցքի խորությունով ( $l_{պ}$ )

$$Q_{պ,г} = S_{անց} l_{պ} q, \text{ տ} \tag{1}$$

որտեղ q-ն ՊՆ-ի տեսակարար ծախսն է, կգ/մ<sup>2</sup>:  
ՊՆ-ի տեսակարար ծախսը կախված է մի քանի գործոններից՝ ապարների ֆիզիկոմեխանիկական հատկություններից եւ առաջին հերթին ամրության գործակցից ( $f$ ), ՊՆ-ի տեսակից, փորվածքի լայնական կտրվածքից եւ այլն:

$$q = (1,35 + 0,1f) k, \text{ կգ/մ}^3 \tag{2}$$

որտեղ k-ն գործակից է, որը է հաշվի առնում փորվածքի լայնական կտրվածքի ազդեցությունը ՊՆ-ի տեսակարար ծախսի վրա:

$$k = \frac{2,19}{S_{անց}} + 0,54 \tag{3}$$

Պայթանցքերի թվով է պայմանավորված ապարների ջարդման որակը, փորվածքի լայնական կտրվածքի ուղղագծման ճշտությունը, պայթանցքերի օգտագործման գործակիցը եւ այլն:

Պայթանցքերի թիվը, կախված ՊՆ-ի տեղավորման պայմանից, արտահայտվում է հետևյալ բանաձեռով՝

$$N = \frac{1,27 S_{անց}}{ad + a_0^2 k \Delta}, \text{ հատ} \tag{4}$$

որտեղ  $S_{անց}$  -ը փորվածքի լայնական կտրվածքի մակերեսն է, մ<sup>2</sup>  
 $d_{փոս}$  -ը փամփուշտի տրամագիծն է, մ,  
a- ն պայթանցքի լիցքավորման գործակիցն է,  
 $\Delta$  -ն ՊՆ-ի խտությունն է, կգ/մ<sup>3</sup>,  
k - ն պայթանցքի լիցքավորման գործակիցն է:

Պայթանցքի խորությունը հորատապայթեցման աշխատանքների հիմնական գործընթացներից մեկն է եվ կամխորոշում է ցիկլի տեվոդությունը, աշխատատարությունը, փորվածքների անցկացման արագությունն ու արժեքը:


Պայթանցքերի խորությունը կախված գոյություն ունեցող հորատող եւ բարձրառեբրող համալիրների հնարավորություններից որոշվում է՝ հետեվյալ կերպ՝

$$\mu_{\text{պ}} = \frac{T_g - T_{\text{լ.պ.}} - T_{\text{օղ.}} - T_{\text{օժ.}}}{\left( \frac{N}{P_{\text{հ}}^{\text{մի}}} + \frac{S_{\text{պ}} \mu_{\text{ղ}}}{P_{\text{բ}}^{\text{մի}}} \right)}, \text{մ} \quad (5)$$

որտեղ  $T_g$  -ը ցիկլի տեւողությունն է, ժամ,  $T_{\text{լ.պ.}}$  -ը լիցքավորման եւ պայթեցման ժամանակն է, ժամ,  $T_{\text{օղ.}}$  -ն օդափոխման տեւողությունն է, ժամ,  $T_{\text{օժ.}}$  -ն օժանդակ աշխատանքների կատարման տեւողությունն է, ժամ,  $N$  -ը պայթանցքերի թիվն է, հատ,  $P_{\text{հ}}^{\text{մի}}$  -ն հորատողների աշխատանքի արտադրողականությունն է, մ/ժամ,  $P_{\text{բ}}^{\text{մի}}$  -ն հորատող բանվորների թիվն է,  $\eta$  -ն պայթանցքերի օգտագործման գործակիցն է,  $\mu$  -ն մակերեսի ավելցուկի գործակիցն է  $n_p$  -ն բարձող բանվորների արտադրողականությունն է,  $P_p$  -ն բարձող մեքենայի արտադրողականությունն է, մ<sup>3</sup>/ժամ:

Պայթանցքերի դասավորության սխեման բերված է նկ. 1-ում:

Պայթանցքերը բաժանվում են՝ ներհատներ, ջարդող, պոկող եւ եզրագծող:



Նկ. 1. Պայթանցքերի դասավորման սխեմա ( $f=22-24$ ,  $S_{\text{պ}} = 18,5 \text{մ}^2$ )

եզրակացություն: Տեսական եվ փորձնական հետազոտությունները ցույց են տվել, որ հիդրոտեխնիկական թունելների շինարարության ժամանակ առաջացող խնդիրների լուծումներն այժմ էլ ունեն եական նշանակություն:

Հորատապայթեցման աշխատանքները գլխավոր տեխնոլոգիական գործընթացներից մեկն է, որն իրականացվում է ձեռքի պերֆորատորներով (ՊՐ-30Կ, ՊՐ-22, ՊՐ-24ՆՄ, ՊՐ-25, ՊՈՒ-15Կ) եվ հորատող սարքավորումներով (ՇԵԿՆ-2, ՇԵԿՆ-2Մ, ԿՅՄՄ, ՇԵԿՆ-3, ԵՄՅ-3, ԵԿԴ-2), որոնք ունեն օգտագործման տարբեր շրջանակներ տեխնիկատնտեսական ցուցանիշներ:

ՊՆ-ի եւ ՊՄ-ի ընտրությունը կատարվում է հաշվի առնելով հանրախորշի գագաթին ռեժիմը ապարների ամրությունն ու ջրահագեցվածությունը, ճեղքավորվածությունը, շերտավորվածությունը, պայթանցքերի տրամագիծը եւ խորությունը, լիցքերի կառուցվածքը եւ այլն: Նշված գործոնների ազդեցության աստիճանները տարբեր են պայթեցման արդյունավետության վրա:

#### Գրականություն

1. Гребенюка В. А., Пыкьянова Я. С. Справочник по горному делу. -М.: Недра, 1983.
2. Белога В. В. Справочник инженера шахтостроителя. -М.: Недра, 1983.
3. Поздняков З.Г., Росси Б.Д. Справочник по промышленным взрывчатым веществам средствам взрывания. -М.: Недра, 1977.
4. Суханов А.Ф., Кутузов Б.Н. Разрушение горных пород взрывом. -М.:Недра, 1983.

### ԼԵՈՆԱՅԻՆ ՓՈՐՎԱԾՔՆԵՐՈՒՄ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԱՄՐԱՎԱԴԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

Ա.Զաքարյան, Գ.Ղազարյան, Ա.Սովսիայան  
Ա.Ստեփանյան

Լեռնային փորվածքների առաստաղում փլվածքների բարձրության զարգացումն ըստ ժամանակի համարվում է հիմնական գործոն փայտյա ամրակապերի պարամետրերի ընտրության դեպքում: Այն համարվում է ելակետային մեծություն՝ ամրակապերի վրա ազդող բեռնվածությունների հաշվարկման ժամանակ: Ինչպես հայտնի է, ապարային զանգվածների մերկացումների դեպքում առաջացած փլվածքների չափերը կախված են մի շարք ազդող գործոններից. ապարների ամրությունից, ներքին խզման անկյունից, ճեղքավորվածությունից, մասնատված կտորների չափերից, ճեղքերի դասավորությունից և կողմնորոշումից, աշխատանքների կատարման խորությունից, տեկտոնական խզումներից, ապարների դեֆորմացման հատկություններից և խոնավապարունակությունից, ինչպես նաև, պայթեցումների ազդեցությունից և մերկացված ապարների երկարատևությունից [1]:


Փլվածքների պարամետրերի վրա ազդող գործոնների բազմաթվությունը դժվարեցնում է կատարել հուսալի չափանիշի ընտրություն: Որպես չափանիշ, ընտրվել է փլվածքի բարձրությունը, փորվածքում մերկացված ապարների թռիչքը (փորվածքի լայնությունը), ապարների ճեղքավորվածությունը, մասնատվածության աստիճանը և ներքին խզման անկյունը:

Օգտվելով Մեղրածորի և Սոթքի հանքավայրերում կատարված բնական դիտարկումներից և մարկշեյդերական հանույթներից ըստ փլվածքի պարամետրերի վրա ազդող գործոնների, գրաֆիկորեն կառուցվել է փորվածքի առաստաղում ձևավորվող հավասարակշռության կամարի տեսքը՝ կախված փորվածքի առաստաղում մերկացված ապարների թռիչքից ( $L$ ), որտեղ հաշվի է առնվել նաև զանգվածի մասնատվածությունը ( $k$ ): Դիտարկվող հանքավայրերում ճեղքերով մասնատված

կտորների չափերը, տատանվում են 0.05-0.35 մ, իսկ հաշվարկներում այն ընտրվել է 0.2 մ: Ստացված արդյունքները բերված են աղյուսակում:

Ապարային զանգվածի բնութագիրը	Փլվածքի բարձրությունը ( $h_0$ , մ) կախված ապարային զանգվածի մասնատվածության աստիճանից ( $\frac{L}{L}$ ) և ներքին խզման անկյունից ( $\phi$ )				
	$\frac{0.2}{1}$ $\frac{0.2}{2}$ $\frac{0.2}{3}$ $\frac{0.2}{4}$				$\phi$ , աստ
	2	3	4	5	
1. Չոր ապարներում	0.2	0.37	0.55	0.74	34
2. Խոնավ ապարներում	0.25	0.48	0.72	0.96	26
3. Ջրի կաթոցների դեպքում	0.37	0.74	1.1	1.48	20
4. Ջրի առատ հոսքի դեպքում	0.48	0.97	1.45	1.94	16

Լեռնային փորվածքում փլվածքի բարձրության ( $h_0$ ) և ապարային զանգվածի մասնատվածության աստիճանի ( $\frac{L}{L}$ ) կախվածության օրինաչափությունը ընդունելով որպես հիմք, մշակվել է փայտյա շրջանակային ամրակապի կոնստրուկտիվ տարրերի չափերի որոշման եղանակ [1]: Սակայն լեռնային աշխատանքներում բանաձևերից օգտվելը կապված է մի շարք բարդությունների հետ: Այդ դժվարությունները բացառելու նպատակով՝ ստորև ներկայացված է նոմոգրամ, հնարավորություն է տալիս անմիջապես որոշելու շրջանակային ամրակապերի միջև եղած հեռավորությունը՝ ըստ փորվածքի լայնության, ապարային զանգվածի մասնատվածության աստիճանի, գերանի տրամագծի և ապարների խոնավապարունակության (Նկ.):



Նկ. Փայտյա շրջանակների միջև եղած հեռավորության (C) որոշման նոմոգրամ: L- ն փորվածքի թռիչքն է, L-ն մասնատված կտորների չափն է,  $\phi$ -ն գերանի տրամագիծն է, 1-ը՝ չոր ապարներում, 2-ը՝ խոնավ ապարներում, 3-ը՝ ջրի կաթոցների դեպքում, 4-ը՝ ջրի առատ հոսքի դեպքում:

Շրջանակային ամրակապերի պարամետրերի որոշման այս եղանակը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում լուծելու հետևյալ խնդիրները.

1. կանխորոշել հնարավոր փլուզումների չափերը և լեռնային ճնշման մեծությունը,

2. ճշգրիտ որոշել ամրակապի շրջանակների միջև եղած հեռավորությունը՝ կախված անտառանյութի տրամագծից:

Նման խնդիրների լուծման դեպքում կճշտվեն լեռնային փորվածքների առատադուն առաջացած փլվածքների պարամետրերը և միջոցառումների շնորհիվ կբարձրանա նրա անցկացման արդյունավետությունը:

#### Գրականություն

1. Закарян А.М. Разработка методики установления параметров крепи горных выработок, проделанных в трещиноватых и обводненных горных породах Меградзорского месторождения // Сборник научных трудов института Армнипроцветмет.-Ереван, 1996. - С.172-177.

## ԹԵՂՈՒՏԻ ՊՂՆՁԱՄՈՒԻԲԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՓՈՒԼԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

### 7. Հովհաննիսյան

Յուրաքանչյուր դիտարկվող ժամանակահատվածում արդյունահանվող դատարկ ապարների և կորզվող օգտակար հանածոյի ծավալները, այլ հավասար պայմանների դեպքում, կախված են լեռնային աշխատանքների ճակատի զարգացման ուղղությունից և ինտենսիվությունից, որոնց ընտրությունը և հիմնավորումը բացահայտների նախագծման և աշխատանքների պլանավորման գլխավոր խնդիրներից են: Այս խնդիրն էլ հարցադրման կարգով դիտարկվում է Թեղուտի պղնձամուխիթենային հանքավայրի բացման ու մշակման հարցերին նվիրված սույն հոդվածում:

Հանքավայրը գտնվում է Լոռու մարզում, Ալավերդի քաղաքից 32 կմ դեպի հարավ-արևմուտք: Հանքավայրի շրջանը ունի զարգացած ենթակառուցվածք, այն ապահովված է էներգետիկ և ջրային ռեսուրսներով, տրանսպորտային ուղիներով, արտադրական ենթակառուցվածքի այլ տարրերով: Ձևաբանորեն հանքամարմինը ներկայացված է խոշոր շտոկվերկի տեսքով՝ նյութական կազմի փոփոխականությամբ և հանքայնացման անհավասար տեղաբաշխմամբ: Շտոկվերկի վերին մասը ներկայացված է օքսիդացած հանքաքարերով: Սուլֆիդային հանքաքարերում հիմնական օգտակար բաղադրիչներն են պղինձն ու մոլիբդենը, իսկ ուղեկից բաղադրիչներից՝ եմիումը, ոսկին, արծաթը և ծծումբը: Իսկ նախնական է հանրապետության Ազարակի և Քաջարանի հանքավայրերին: Հիմնական հանքային միներալներն են՝ խալկոպիրիտը և մոլիբդենիտը: Հանքաքարերը ցանավոր (խայծավոր) հանքայնացման տիպի են: Սուլֆիդային հանքաքարերի հաստատված պաշարները կազմում են շուրջ 450 մլն տոննա: Պղնձի միջին պարունակությունը 0,36% է, իսկ մոլիբդենինը՝ 0,022%: Պաշարները հաշվարկված են պայմանական մոլիբդենի 0,03% եզրագծային պարունակության օգտագործմամբ: Ըստ խորության, պղնձի պարունակությունը նվազում է, իսկ մոլիբդենինը՝ բարձրանում: Օգտակար բաղադրիչների պարունակությունների փոփոխականության գործակիցները, ըստ խորության կազմում են. պղնձինը՝ 96%, մոլիբդենինը՝ 100,6%, ինչը վկայում է, որ երկրաբանական կառուցվածքի բարդությամբ հանքավայրը ըստ ՀՀ "Պինդ օգտակար հանածոների կառուցվածքի բարդության և կանխատեսումային ռեսուրսների դասակարգման"[1] կարելի է վերագրել երկրորդ խմբին:

Հանքավայրի բացումը պետք է սկսել երկրաբանական պայմանների տեսանկյունից՝ ամենաբարենպաստ տեղադիրքից: Բացահանքի ծառայման ժամկետը բաղկացած է հետևյալ ժամանակահատվածներից՝ հանքավայրի բացում, նախա-

գծային արտադրական հզորության յուրացում, նորմալ արտադրական հզորությամբ գործում և մարում:

Բացահանքի շինարարության ժամանակ լեռնային աշխատանքները իրականացվում են ի հաշիվ կապիտալ ծախսերի: Արտադրական հզորության յուրացման ժամանակ արդեն բացահանքը տալիս է ապարանային արտադրանք: Այդ նույն ժամանակաշրջանում կատարվում է հիմնական կապիտալ ներդրումների ետգնումը, որը բարձր արդյունավետությամբ աշխատող հանքարդյունաբերական ձեռնարկություններում կազմում է 2-4 տարի, իսկ միջին պայմաններում գործող ձեռնարկությունների համար նշված ցուցանիշի ընդունելի մեծությունները սովորաբար, կազմում են 5-7 տարի: Ակնհայտ է, որ լավագույն տեղամասից մշակման սկսումը բերում է կապիտալի արագ ետգնմանը: Հանքավայրի բացման եղանակի և լեռնային աշխատանքների զարգացման ուղղության ընտրության ժամանակ գնահատվում են հանքաքարի որակը, հանքավայրի բացման լեռնային աշխատանքների ծավալները, ծախսերը, տևողությունը, ինչպես նաև ընդունված բացման եղանակի դեպքում՝ տնտեսական, տեխնիկական ու կազմակերպչական հետևանքները: Հանքավայրի բացման եղանակի ընտրման պարզագույն չափանիշը հանդիսանում է հետևյալ հարաբերությունը [2].

$$\mu_i = \frac{V_i}{P_i} \rightarrow \min \quad (1)$$

որտեղ  $V_i$ -ն մինչ  $i$ -րդ տարին հանված դատարկ ապարների ծավալն է, մ<sup>3</sup>;  $P_i$  -ն մինչ  $i$ -րդ տարին արդյունահանված օգտակար հանածոյի ծավալն է, մ<sup>3</sup>,  $\mu_i$ -ն, փաստորեն, հանքավայրի մշակման սկզբից հաշված մակաբացման միջին գործակիցն է:

Այս կախվածությունում հաշվի չի առնվում կորզվող մետաղի քանակը, այսինքն հանքաքարի իրացումից ստացվող բացահանքի հասույթը և դրան համապատասխան շահույթը: Այս կախվածությունը հնարավոր կարող է լինել հանքաքարում օգտակար բաղադրիչների համասեռ պարունակության դեպքում, ինչը մետաղական հանքավայրերում գրեթե չի հանդիպում: Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի պայմաններում, երբ մենք գործ ունենք բազմաբաղադրիչ, փոփոխական պարունակությամբ հանքաքարի հետ, որպես չափանիշ կարող է ծառայել հանքավայրի մշակման ծախսերի և կորզվող արծեքի հարաբերության նվազագույն մեծությունը կամ ապարանային արտադրանքի իրացումից ստացված շահույթը:

Թեղուտի հանքավայրում իրականացված երկրաբանահետախուզական աշխատանքների տվյալների մանրամասն վերլուծությունը թույլ տվեց եզրագծել անմիջապես օբսիդացած հանքաքարերի տակ գտնվող օգտակար բաղադրիչների բարձր պարունակությամբ հարստացված գոտին: Ըստ այդմ, առաջարկվում է հանքավայրի բացումը և մշակումը կատարել հետևյալ փուլերով.

- I. փուլ՝ հարստացված գոտու հանքաքարի արդյունահանումը,
- II. փուլ՝ հանքաքարի պաշարների արդյունահանումը մինչև 890 մ հորիզոնը,
- III. փուլ՝ հանքաքարի պաշարների արդյունահանումը մինչև բացահանքի սահմանային խորությունը:


Հանքավայրի յուրացման II փուլը առանձնացվում է այն նկատառումով, որ մինչև 890մ հորիզոնը բացահանքի հանքատիճանները անմիջական ելք ունեն դեպի մակերևույթ, ինչը կանխորոշում է կիսախրամներով հանքատիճանների բացման հնարավորությունը: Այս հանգամանքը կիեշտացնի հանքաքարի և դատարկ ապարների տեղափոխումը, համապատասխանաբար դեպի հարստացուցիչ ֆաբրիկա և լցակույտեր, ինչը կնպաստի շահագործական ծախսերի կրճատմանը:

III փուլում բացահանքի վերջնական դիրքի վերաբերյալ դժվար է առայժմ որևէ կոնկրետ գնահատականներ տալ, բացի որ I և II փուլերի տևողությունը կազմում է միասին մոտ 17 տարի և այդքան ժամանակ անց դժվար է օգտակար բաղադրիչի գնի վերաբերյալ որևէ կանխատեսում տալ, բացի այդ III փուլի սահմանները կորոշվեն բացահանքի սահմանային խորության որոշումից հետո: Առկա է ևս մի կարևոր հանգամանք. 890 մ հորիզոնից ներքև հանքաքարի պաշարների որակաքանակական ցուցանիշների հավաստիությունը ճգրտման կարիք ունի, որը ավելի նպատակահարմար է կատարել II փուլի լեռնային աշխատանքների իրականացման գործընթացում և հիմնավորել բացահանքի վերջնական դիրքի սահմանները՝ ելնելով սահմանային և եզրագծային մակաբացման գործակիցների հավասարության պայմանից:

Համակարգչային "Datamine Studio" ծրագրի օգտագործմամբ դիտարկվել են հանքավայրի բացման 13 տարբերակ: I-ին նկարում դիտարկված տարբերակներից բերվում են առավել բնութագրական երկուսը: Առաջին տարբերակում ցույց է տրված շահույթի կորի այն դեպքը, երբ հանքավայրի բացումը սկսված է հանքամարմնի մերձակերևույթային տեղամասից, սակայն հանքավայրի՝ օգտակար բաղադրիչով հարուստ գոտին, չի ընդգրկված և յուրացման փուլերը չեն դիտարկվում: Երկրորդ տարբերակում դիտարկվում են հանքավայրի յուրացման վերը նշված փուլերը: Ինչպես նշվել է, I փուլում իրականացվում է հարստացված գոտու հանքաքարերի արդյունահանումը, ինչն ապահովում է տվյալ փուլի ժամանակահատվածում առավելագույն շահույթ, ըստ որում այս տարբերակում դիտարկվում է դիսկոնտված շահույթը, որի դեպքում  $S_{2\Delta} \rightarrow \max$ : Այս ցուցանիշի օգտագործումը կկրճատի կապիտալ ներդրումների ետգնման ժամկետը և կապահովի բանկային վարկի տոկոսադրույքների արագ մարում: Ակնհայտ է, որ այս տարբերակում  $S_{2\Delta}$  նկատելիորեն մեծ է  $S_{1\Delta}$ -ի մակերեսից:

Այսպիսով, հանքավայրի յուրացումը առանձին փուլերով կապահովի հետևյալ առավելությունները.

- I փուլում, շնորհիվ թեք տեղադրված հարստացված գոտու մշակման, բացահանքը կապահովի ավելի բարձր շահույթ (նկ. 1-ի վրա պատկերված գրաֆիկները) և կկրճատի կապիտալ ներդրումների ետգնման ժամկետները,



Նկ 1 Թեղուտի բացահանքի փուլային մշակման պայմանավորաբաններ

—  $S_{1\Delta}$  շահույթ — — —  $S_{2\Delta}$  դիսկոնտված շահույթ

- առաջին երկու փուլերում հանքավայրի շահագործումը հնարավոր է իրականացնել սարալանջի կողմից,
- II փուլում լեռնային աշխատանքների իրականացման գործընթացի ընթացքում կարելի է ճշգրտել III փուլի հանքաքարի պաշարների որակաքանակական ցուցանիշները և հիմնավորել բացահանքի սահմանների վերջնական դիրքը,
- հանքավայրի ավելի խորը հորիզոնների հետախուզումը կատարել ավելի ուշ ժամանակահատվածում:

#### Գրականություն

1. Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգում (ՀՀ ՊՊՀ): - Երևան, 1998. - 16 էջ:
2. Теория и практика открытых разработок /Н. В. Мельников и др. 2-е изд. перераб. и доп. - М.: Недра, 1979. - 636 с

**ՔԱԶԱՐԱՆԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՀԱՆՔԱՔԱՐԵՐԻ ՊԱՇՏՈՆԵՐԻ ՕՊԵՐԱՏԻՎ  
ԳԱՆՐԱՏՄՈՒՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

*Ա. Հակոբյան*

Քաջարանի պղնձամուլիբդենային հանքավայրի շահագործման արդյունավետության բարձրացման նպատակով Ջանգեզուրի պղնձամուլիբդենային (ԶՊՄ) կոմբինատի կողմից նոր քայլ կատարվեց համակարգչային նախագծող և վերահսկող ծրագրի ձեռք բերման ուղղությամբ: 2005թ. Բրիտանական "Mineral Industry Computing Ltd" ֆիրմայի կողմից թողարկվող "DATA MINE-Studio" ծրագրային փաթեթի ձեռքբերումը և նախագծային ու մինչնախագծային փուլերում նրանց կիրառումը նոր հնարավորություններ է ստեղծում հանքավայրի շահագործման արդյունավետության բարձրացման համար: Այսօր արդեն սկսված են աշխատանքները հանքավայրի մեծածավալ երկրաբանահետախուզական տվյալների քվանցաված հենքի ստեղծման ուղղությամբ: Դա մեծ քայլ է հանքավայրի շահագործման ավտոմատացված վերահսկման ու կառավարման գործում: Կան նոր ձեռքբերումներ ու առաջընթաց, սակայն արտադրական գործընթացների կազմակերպման կատարելագործման հնարավորությունները դեռևս սպառված չեն:

Մինևոյն ժամանակ, միջազգային շուկայում մետաղների գների աճը նոր խթան հանդիսացավ լեռնահանքային արդյունաբերության զարգացման համար, ինչը պայմանավորված է մի շարք գործոններով, տեղի է ունեցել մետաղների պահանջարկի զգալի աճ՝ կապված երկրագնդի բնակչության քվի ավելացման, զարգացած պետություններում մեկ մարդուն ընկնող մետաղի բաժնեմասի տարեցտարի աճի հետ: Կարևոր հանգամանք է նաև հանքավայրերի մշակման պայմանների վատթարացումը և առավել բարենպաստ պայմաններով հանքաքարերի պաշարների մարումը, որը բերում է նոր, առավել վատ պայմաններով հանքավայրերի շահագործման: Բավական է նշել, որ 1 տ գտած (ռաֆինացված) պղնձի գինը 2001թ. կազմում էր ընդամենը 1500 \$, իսկ 1 տ մուլիբդենինը՝ 10400 \$: Այսօր արդեն 1 տ մետաղական մուլիբդենի և գտած պղնձի գները կազմում են համապատասխանաբար՝ 60000 \$ և 38000 \$:

Հանքաքարում օգտակար բաղադրիչի եզրագծային պարունակությունը և բացահանքի վերջնական սահմանները ֆունկցիոնալ կախվածության մեջ են հանքաքարում առկա մետաղների շուկայական գնից: Գների աճը բերում է հանքաքարում օգտակար բաղադրիչի եզրագծային պարունակության նվազմանը, որը իր հերթին հանգեցնում է հանքավայրի շահագործման տեխնիկատեխնոլոգիական պարամետրերի փոփոխմանը:

Հայաստանի Հանրապետության "Պինդ օգտակար հանածոների պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգման" [1] (այսուհետև՝ Դասակարգում) 32 կետի համաձայն օգտակար հանածոների հանքավայրերում նախատեսվում է հանքային հումքի կոնդիցիաների և պաշարների վերահաստատում ոչ ուշ, քան 10 տարին մեկ անգամ: Սակայն 10 տարվա ընթացքում հնարավոր են մետաղների գների հաճախակի փոփոխություններ և ամեն տարի հնարավոր չէ իրականացնել հանքաքարի կոնդիցիաների և պաշարների վերահաշվարկ: Դա պայմանավորված է նրանով, որ կոնդիցիաների պարամետրերի վերահաշվարկը ծավալուն և թանկարժեք աշխատանք է: Նման դեպքերում անհրաժեշտ է մետաղների կանխատեսումային գների աճի կամ նվազման պայմաններում ունենալ հանքավայրի շահագործման օպերատիվ կառավարման համակարգ [2]: "DATA MINE-Studio" ծրագրային փաթեթի կիրառումը հնարավորություն է ընձեռում եզրագծել հանքաքարի պաշարները մի քանի տարբերակով: Այսինքն, հանքաքարի պաշարները եզրագծվում են մի քանի գների և եզրագծային տարբեր պարունակությունների դեպքում: Հաշվարկվում են 1 տ հանքաքարում օգտակար բաղադրիչի (կամ բաղադրիչների) պարունակությունները և հանքաքարի կորզվող արժեքները՝ ցանկացած գնի պայմաններում: Արդյունքում ստանում ենք մեքանիկալի տարբեր գների դեպքում տարբեր եզրագծային պարունակություններ, հանքավայրերի բաց եղանակով մշակման դեպքում հանքաքարի տարբեր պաշարներ: Հանքավայրերի եզրագծային պարունակության փոփոխությունը հանգեցնում է [3].

1) հաշվեկշռային պաշարների փոփոխության՝ առանց բացահանքի վերջնական սահմանների փոփոխման,  
2) հաշվեկշռային պաշարների փոփոխության՝ բացահանքի վերջնական սահմանների փոփոխմամբ:

Առաջին դեպքում բացահանքի սահմաններում արտահաշվեկշռային պաշարները վերագրվում են հաշվեկշռայիններին՝ ի հաշիվ շուկայում մետաղի գնի բարձրացման: Երկրորդ դեպքում՝ շուկայում մետաղի գնի փոփոխությունը բերում է բացահանքի սահմանների փոփոխմանը, հետևաբար տեղի է ունենում հաշվեկշռային պաշարների հավելած կամ նվազում:

Քննարկված վերոնշյալ երկու տարբերակներից առաջինը: Այս դեպքում բացահանքի սահմաններից հանվող լեռնային զանգվածի ծավալը մնում է անփոփոխ և փոփոխվում է միայն դատարկ ապարների ու օգտակար հանածոների ծավալների հարաբերակցությունը: Հանքաքարի պաշարների աճը բերում է հարստացուցիչ ֆաբրիկա տեղափոխվող հանքաքարի ծավալների աճի, ինչը անհրաժեշտ է հաշվի առնել ֆաբրիկայի նախագծման գործընթացում՝ նախատեսելով լրացուցիչ արտադրական կարողություններ: Հակառակ դեպքում ֆաբրիկայի տարեկան արտադրողականությունը չի փոփոխվի, այլ կմեծանա հանքավայրի ծառայման ժամկետը, կնվազի 1 տ հանքաքարում մետաղի միջին պարունակությունը, ինչը կրելի մետաղի տարեկան ծավալի նվազման:

Մետաղների գնի նվազումը բերում է նախագծային բացահանքի սահմաններում դատարկ ապարների ծավալների մեծացման, հետևաբար օգտակար հանածոյի ծավալների նվազման: Այս դեպքում հարստացուցիչ ֆաբրիկա չեն տեղափոխվում, համեմատաբար, ցածր պարունակությամբ հանքաքարի պաշարները: Բացահանքում բավարար աշխատանքային ճակատ լինելու դեպքում այդ պաշարները հնարավորինս չեն ենթարկվի հանույթի (դա բնորոշ է հորիզոնական տարածում ունեցող և ոչ մեծ հզորության հանքամարմիններին): Սակայն, երբ հանքամարմինը տեղադրված է մեծ խորության վրա և չունի հորիզոնական տարածում, ապա անհրաժեշտ է, համեմատաբար, ցածր պարունակությամբ հանքաքարերի ժամանակավոր պահեստավորում, մինչև մետաղների գների վերստին բարձրացումը:

1941-2005թթ. շուկայակայուն գտված պղնձի գների վերլուծությունը ցույց է տվել, որ 10 տարվա ընթացքում տեղի է ունենում մետաղների գնի աճ՝ 13% և ավելի չափով: Ավելի կարճ ժամանակահատվածների համար հնարավոր է մետաղի գնի նվազում, սակայն դա կկրի ժամանակավոր բնույթ: Անհրաժեշտ է նշել, որ այսօր շուկայում մետաղների գները հասել են իրենց ռեկորդային ցուցանիշներին: Նշենք, որ կոնդիցիաների պարամետրերի վերահաշվարկ ԶՊՄ կոմբինատում վերջին անգամ կատարվել է 2003թ.: Սակայն, անցած երկու տարիների ընթացքում տեղի է ունեցել պղնձի և մուլիբդենի գների զգալի աճ: Հաշվի առնելով նաև հանքաքարային ռեսուրսների անվերականգնելիությունը, կարելի է հստակ պնդել, որ ներկայիս գնային պայմաններում կրկին անհրաժեշտություն է առաջանում կատարել կոնդիցիաների պարամետրերի վերահաշվարկ: Ներկայումս Քաջարանի պղնձամուլիբդենային հանքավայրի առաջնահերթ շահագործման տեղա-

մասի պաշարների հաշվարկման համար հաշվեկշռային պաշարներում հաստատվել է պայմանական մոլիբդենի եզրագծային պարունակությունը 0.03 %:

Քաջարանի հանքավայրի պայմանների համար կատարենք հանքաքարի եզրագծային պարունակության վերահաշվարկ՝ ելնելով զների ներկա մակարդակից: Հաշվի առնելով կարճ ժամանակահատվածում մետաղների զնի հնարավոր նվազման հանգամանքը և կիրառելով որոշակի պահուստային գործակից (1.5)՝ հաշվարկների համար մոլիբդենի 1 տ խտանյութի զինը ընդունվել է 19500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Բացահանքում օգտակար բաղադրիչի եզրագծային պարունակության բնեղեն մեծությունը ( $C_{\text{օրմ}}$ ) որոշենք հետևյալ հայտնի բանաձևով [3]:

$$C_{\text{օրմ}} = \frac{D_{\text{օրմ}}(C_k - C_x)}{I_x} + C_x, \quad (1)$$

որտեղ  $C_k$  -ն խտանյութում մոլիբդենի պարունակությունն է (50%),  $C_x$  -ն հարստապոչներում մետաղի պարունակությունն է (0.005%),  $I_x$  -ն 1 տ մոլիբդենի խտանյութի զինն է (19500 \$),  $D_{\text{օրմ}}$  -ն եզրագծային պարունակության դրամական արտահայտությունն է, որը բացահանքերի համար որոշում ենք հետևյալ բանաձևով՝

$$D_{\text{օրմ}} = \frac{K'_{\text{օ}}}{Q_{\text{ձ}}} A + P'_0 + (3_{\text{Ղ,ձ}} - 3_{\text{Ղ,Ո}}) \quad (2)$$

որտեղ  $K'_{\text{օ}}$  -ն հարստացուցիչ ֆաբրիկայի շենքերի և կառույցների տեսակարար ներդրումներն են, որը ՁՊՍ կոմբինատում մոտավոր հաշվարկներով կազմում է  $K'_{\text{օ}} = 2.7$  \$,  $Q_{\text{ձ}}$  -ն հանքաքարի պաշարներն են (տվյալ դեպքում նախագծային բացահանքի սահմաններում 1860 մ հորիզոնից բարձր),  $Q_{\text{ձ}} = 220$  մլն. տ,  $A$  - ն բացահանքի տարեկան նախագծային արտադրողականությունն է,  $A = 8$  մլն. տ,  $3_{\text{Ղ,ձ}}, 3_{\text{Ղ,Ո}}$  -ն համապատասխանաբար հանքաքարի և դատարկ ապարների 1տ-ի տեղափոխման ծախսերն են: 1 տ մակարացման ապարների հեռացման ծախսերը 0.1 \$-ով բանկ են, քան 1 տ հանքաքարի տեղափոխման ծախսերը ( $3_{\text{Ղ,ձ}} - 3_{\text{Ղ,Ո}} = 0.1$ \$):

Այս տվյալների տեղադրումից հետո կստանանք՝  $D_{\text{օրմ}} = 3.02$  \$, իսկ  $C_{\text{օրմ}} = 0.02$  %:

Այսպիսով, նույնիսկ նման պահուստային բարձր գործակցի կիրառմամբ հանքաքարում օգտակար բաղադրիչի եզրագծային պարունակությունը նկատելիորեն նվազում է և այս օր արդեն այն կկազմի  $C_{\text{օրմ}} = 0.02$  %: Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև հանքահումքային ռեսուրսների անվերականգնելիությունը և սահմանափակ լինելը, հանքավայրերի շահագործման ժամանակ աշխատանքային օպերատիվ ծրագրերի ստեղծումը և ներդրումը շատ արդիական ու կարևոր խնդիր է:

#### Գրականություն

1. Հայաստանի Հանրապետության օգտակար հանածոների պաշարների պետական հանձնաժողով (ՀՀ ՊՊՀ): Պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգում: - Երևան, 1998, 16 էջ:
2. Капутин Ю.Е. Горные компьютерные технологии и геостатистика.-СПб.: Недра, 2002. - 424 с.
3. Агабян Ю.А. Теория и практика оптимального освоения недр. -М.: Недра, 1994. - 174 с.